

որ շատ ոգևորեալ եղաւ, և շողմարար գինարբութիւնքն իսկ խիստ առատ. կենդանութեան մաղթանաց բաժակնե-
րը առատաղեղ հնչուեցան, ամենայն սեղանակցաց հարիւրամեայ կենդանու-
թեան պարգևը ապահովցնելու դիտ-
մամբ: Պարոն Փրանկիս Մ... նախա-
գահ նստած էր սեղանին, որուն ոգիքը
թէպէտ ուրախութեամբ յուզեալ էին,
այլ ինքզինքը զուսպ ունելով կատա-
րեալ ծանրաբարոյութիւն մը կ'երևցը-
նէր:

Ի մեծ դարմանա Տիբ ֆէննըտիի, բա-
քոսեան մաղթանաց մեծ մաս մըն ալ
իր անձին ուղղուեցան. յետ «պար-
ծանք Անգղիոյ անվեհերն Ֆէրկըսընի»
կենաց խմելէն, պէտք եղաւ խմել
«վասն ոչ նուազ արիասրտին ֆէննը-
տեայ, անոր յանդուգն ընկերոջ» կե-
նացը:

Տիբ չիկնեցաւ, և ընկերութիւնը զայն
պարկեշտութիւն համարեց. ուստի և
ծափահարութիւնքն կրկնուեցան, ու
րուն վրայ Տիբ ալ աւելի կարմրեցաւ:

Պտղոց և քաղցրաւենեաց ժամանակ
թագուհւոյն կողմանէ պատգամաւո-
րութիւն մը հասաւ. երկու ճանապարհ-
հորդաց մեծարանք ընելով, անոնց ձեռ-
նարկութեանը յաջող եկք մը կը մաղ-
թէր:

Եւ այս դարձեալ առիթ մը եղաւ
բաժակաց հնչիւնը լսեցընելու՝ ի պատիւ
նորին «Յոյժ Շնորհաշուք վեհափա-
ռութեանը»: Կէս զիշերին, յետ սրտա-
շարժ երթայք բարոյներէ ու ձեռաց
ջերմ սեղմելներէ, սեղանակիցք մէկ-
մէկէ հրաժարեցան:

Բիզօյիշդիմ մակոյկները Ուէստմինս-
դրի առջև կը սպասէին. հրամանա-
տարը՝ իր ճամբորդներովն ու սպանե-
րովը մէջը մտաւ, ու թայմզին սրար-
շաւ հոսանքը զիրենք դէպ 'ի կրինիչ
վարեց:

Ժամը մէկին, նաւուն վրայ ամենայն
ոք կը ննջէր:

Կը շարունակուի:

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես էրես 61)

ՀԱՆԴԷՍ Բ

Սրահ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԱՅՏՈՒՌՈՍ, ԲՐՈՒՏՈՍ

ԱՅՏ. Այդ քո խորիստ արհամարհութիւն, այդ
քո յանդուգն ժպրհութիւն ոչ յառաքինութե-
նէ ինչ է, այլ 'ի վայրենի գազանութենէ. ոչ
պարտ էր քեզ խոնարհել անկանել առաջի գթու-
թեան և զօրութեան Կեսարու. և կամ գոնեայ
չէր արժան ունին մատուցանել նմա. այլ աւանդ,
զի ոչ գիտէ Բրուտոս՝ թէ յուսմէ՛ խորշի, յուս-
մէ՛ վտարանջէ. և հեծէր արդեօք թէ խելամուտ
էր:

ԲՐՈՒ. Շատ է ինձ հեծութիւնս, զոր հեծեմ արդ-
'ի բանս քո. այ վատ արանց, անշնորհ քաղա-
քացի, թշնամի Հռովմայ 'ի քէն մասնեղոյ. զի՛
խնդրես, աղէ ասա. խաբէ՛լ թերես և կամորսալ
զԲրուտոս. երթ յինէն, 'ի բաց կաց. երթ բազ-
մեաց՝ գողալով ընդ ձեռամբ բռնաւորին՝ որ ճմլէ
զքեզ. նշաւակեցան այսուհետև հաղթք քո. ծա-
ռայութեան ցանկութեամբ հաշիս, հէգ և թը-
շուառական. և միթէ Հռովմայեցի՛ իցես դու,
գո՛ւ և հիւպատոս, այ անարժան:

ԱՅՏ. Մարդ եմ ես, Բրուտէ, և մտերիմ բարե-
կամ. ոչ խնդրեմ առաքինութիւն մեծ քան զայսո-
սիկ. իսկ դու՝ որ գիւցազնութեան թեկն ածես,
բարբարոս ես անմարդի, և այդ քո լրբենի գո-
ռողութիւն խնդրէ զառաքինութիւն, զի տացէ
զնա յահ և յերկիւղ և յատելութիւն. «Ելանէ»:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԲՐՈՒՏՈՍ

Բուռն է ինձ, ով գիւք, 'ի թշնամանող լեզուէն.
այ պաերասան թռնալից բերան. ահաւասիկ
կարծեցեալ հիմունք տառապեալ իմոց հայ-
րենեաց. ահա ձեր յաջորդք, դիւցազնացեալքդ
'իեկոյք և Ովրատիոյք. և դու անաչառ վրէժ-
խընդիր օրինաց Հռովմայ՝ արիւն իմ, իմն Բրու-
տէ. զինչ այլ մնաց մեզ 'ի փառաց անտի Հռով-
մայ. ամենայն ոք ահիւ գողութեամբ մատուցեալ
համբուրէ զանօրէն ձեռն բռնաւորին՝ որ զմեզ
առ հասարակ զորդիս Հռովմայ յերկաթս դերէ:
Կեսար, բարձ 'ի մէնջ և զառաքինութիւն ան-
գամ, և ես արդ զՀռովմ խնդրեմ, և զՀռովմ ես
ոչ գտանեմ: Աղէ դուք վեհազուն ծնունդք Հռով-
մայ՝ զորոց աչք իմ տեսին զմահ սիրելեաց, և զո-
րոց արդ զոտս արտասուօք թանամ 'ի պատկեր
փառաց. ով դու արիդ Պոմպէոս, դու աստուա-
ծացեալ հոգի Կատովնի, և դու Շիսլոն դիւցա-

զանց տո՛ւմի շառաւիղ վերջին. վառեցէք յայտ սիրտ զբոց անծախական ձերու՛մ արութեանն. կենդանասցին անձինք ձեր կրկին 'ի Բրուտոս. առէք ինձ սիրտ արժանի պատուոյն՝ զոր այս բռնաւոր յափշտակէ 'ի Հռովմայ: Այլ զի՛նչ է զոր տեսանեմ, ո՛վ մեծ Պոմպէ, 'ի քում պատուանդանի. զի՛նչ իցեն նամակքդ՝ յորս զիմ անուն գրողմեալ նշմարեմ. եթէ ներես ընթերցայց (Ընթեա՛ն)։ « Ննջես դու, Բրուտէ, և Հռովմ գերեալ կայ: Ա՛հ, Հռովմ, աչք իմ մի փակեացին 'ի վերայ քո. ո՛վ զիք, մի յանդիմանէք ինձ զգերութիւնս՝ որ գարշելի է ինձ, չեմ ես հազորդ իսկ. զի՛նչ և այն որ զկնի. (Ընթեա՛ն) » (Ոչ, ոչ, չես գու Բրուտոս)։ Այ գառն կշտամբանք. սարսիւր, անօրէն բռնաւոր. սարսեաց, Կեսար. ահա ձգեմ ես զձեռն իմ 'ի վերայ քո. չես գու Բրուտոս, չեմ ես Բրուտոս. եմ և եղէց. մեռայց, Հռովմ, կամ թէ գու փրկեացիս: Է դք դեռ ևս 'ի քեզ առաքինութեան սիրող: Հռովմ վրէժխնդին զոմն հայցէ. Հռովմ զաչս իւր յիս գարձուցանէ. Հռովմ զսիրտ և զբազուկ իմ վարէ. Հռովմ արիւն խնդրէ. Հռովմայ այսօր վրէժք խնդրեսցին:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԲՐՈՒՏ. ԿԱՍՍԻ. ԴԵԿԻՄ. և ԴԱՄԱՃԱՆԿ:

ԿԱՍ. (ՄԷԼ ԳԻՐԻՍ ԵՃԷ ԲԵՐԳՈՒՄԻ) Այս քեզ իմ վերջին ողջոյն, ո՛վ քաջ Բրուտէ. ընդ կործանմամբ հայրենի մերոց օրինաց՝ պարտ է այսօր և մեզ մեռանել. ես ոչ ինչ ակն ունիմ երբեք թողութեան հանդիպել 'ի Կեսարէ. գիտէ և արդ զկորհուրդս մեր, և ոչինչ է անտեղեակ արութեան մերում. ծանեալ եթէ մեքենայք իւր հրապարակեցան վաթարացան առաջի մերոց անհրապոյր մտաց. յանկարծ եթէ տայր դք նմա սատակել ջրնջել 'ի մեզ գնչխարեալ մնացորդս Հռովմայ. եհա մեզ ժամ մահագուշակ. կորեալ ամենայն. ոչ ևս մեզ յոյս բարեաց. ոչ հայրենիք, ոչ պատիւ, ոչ օրէնք և ոչ ևս Հռովմ 'ի միում՝ առ յաղթանակէ Կեսար աշխարհի և Հռովմայ. վասն սորա միայն էին մարտք մերոց նախնեաց, եօթնամեան քիրտն և ապաժոյժ. 'ի փառս յաղթանակի սորա և սպաւք արքունի, թագ և գաւազան և ամենայն արութիւն բազկի, զայս ամենայն յափշտակեաց Կեսար, և եկուլ ծախեաց զամենայն արգասիս բարեաց, զոր աւուրք փառաց վեցեակ դարուց՝ հազիւ ծնան մեզ մեծավիշտ երկամիք. ա՛հ իմ Բրուտէ, եթէ ծնար և դու 'ի գերութիւն այն բռնաւորին. զի գնաց ազատութիւն 'ի մէնջ տեղի ես:

ԲՐ. Դարձցի միւսանդամ, եկեսցէ և ոչ անագանեսցէ:

ԴԵԿ. Ո՛ր տայր... այլ զի՛նչ իցէ ազաղակս:

ԲՐ. Թող անդր 'ի բաց զժողովուրդն զայն խորհրդապետոյս. զի ձայն գերելոց բազմութեան լսեմ ես:

ԿԱՍ. Այսպէս ուրեմն ազատութիւն... սակայն դաւով դոյ և զօրանայ ազաղակդ:

ՏԵՍԱՐԱՆ Դ

ԿԻՄԲԵՐՈՍ ԿԱԳՆԱԿԱՆ:

ԿԱՍ. Դո՛ւ ես, Կիմբերոս. զի՛ է զի խռովեալ ես, խօսեաց:

ԴԵԿ. Միթէ նե՛նգ ինչ գործիցեն ընդդէմ հայրենեաց. զի՛նչ իրք իցեն, զի՛նչ տեսեր, աղէ պատմեալ:

ԿԻՄԲ. Ձնախատինս Հռովմայ տեսի ես և զկործանումն. Կեսար արձանացեալ 'ի մէջ տաճարին, որոտընդոտ բարբառով նմանեալ շանթառաք վէհին, քարոզ կարգայր խորխտաձայն պատգամօք զիւրոց ծանծաղամիտ խորհրդոցն. իբրեւ այն թէ՛ ելցէ նա ընդ հուպ զօրու ծանու ճակատաւ պարսկական գնդին, և զՊարսս՝ Հռովմայ սահման հատանել. անգուստ բարբառ հնչեաց, և ձայնէին զնա Կայծակն պատերազմի, յաղթող աշխարհի, քինախնդիր փառաց Հռովմայ. այլ նորա գոռոզութիւն սոքիմք ոչ չատանայր. և այլ ինչ պահանջէր վէհ քան զամենայն:

ԱՅԼՔՆ. Ա՛յ անամօթ երես:

ԿԻՄԲ. Յայտ ձայն ցնծութեան պատառեալ զամբոխն մտանէ Անտոնիոս. ո՛ր անլուր աղէտ. թագ և գաւազան 'ի ձեռին: Լռեաց ամբոխն և հծծել սկսաւ: Իսկ նորա անվէհէր համարձակ յառաջ խաղացեալ, (սոսկացին ծնունդք Հռովմայ), մատուցեալ իւրով իսկ ձեռամբ եղ ըզթագն 'ի զլուխ Յուլիոսի Կեսարու. և անկեալ առ ոտս նորա, գոչէր մեծաձայն. Կեցցէ, Կեսար, տիեզերաց արքայ և Հռովմայ:

ԲՐՈՒ. } Ա՛յ անօրէն անարժան: Ո՛ր անագորոյն
ԿԱՍ. } բռնաւոր:
ԴԵԿ. }

ԿԻՄԲ. Ի լուր այսպիսի՝ շրջեցաւ տա հասարակ գոյն երեսաց Հռովմայ, և հնչեաց երկին 'ի ձայն գուժալից ողբալոյ նորա. և բազում մարդիկ զահի զամօթի հարեալ կարմրեանդ քողով ծածկեալ զգէմս առհասարակ վայրանկեալ բբօք՝ խուճապեալ ցրուեցան զգերարտօսը ի յուցանել լով: Անդէն գուշակեալ Կեսար զցատումն ժողովրդեան, ըստ իւրում հնարիմաց խորամանկութեան՝ առեալ ընկէջ 'ի գլխոյն զթագն յերկիր և զգաւազանն, և առաթուր հարեալ խորտակէր: Յայնժամ ամենեքին առ հասարակ յուրախութիւն դառնային իբրու ազատութիւն ստացեալք: Պակուցեալ Անտոնիոս տեղի ետ. կեղծաւորութիւն Կեսարու առաքաստ ձգեցաւ չարութեան նորա. ցուցանէր նա 'ի վերին երեսս հրաժարել 'ի փառաց անտի, այլ 'ի խոր խոցեալ ակամայ կամօք հեծէր 'ի սրտի, հասանել պատուոյ որում՝ չէր արժան: Ապա ոչ բաւեալ լուել 'ի սրտմտութենէն ել նա արտաքս տաղնապաւ 'ի տաճարէ անտի. ետ հրաման ծերակուտին առ ինքն ժողովել 'ի միում ժամու: Յետ միոյ ժամու փոխէ Յուլիոս զիշխանութիւնն. բազմաց աւագանւոյն հրապուրեալ են միտք 'ի վաճառ ձգեցաւ Հռովմ, և բռնաւորն նմա գինս հատանէ. 'ի վատութիւն եղև ծերակոյտն քան զաւարկն ամենայն, որում և 'ի կապանսն անդ գառն է նմա լսել զանուն արքայի: Կեսար պերճացեալ իշխէ տիրաբար. և այլ ոչ է շատ, խնդրէ և 'ի վերայ այսր նշան արքայի. ուսմիկն զլսնայ, ծերակոյտն պարգևէ:

արդ զինչ ինչ առնել է, բարեկամք քաջ, աղէ ընտրեցէք:

ԿԱՍ. Զինչ առնել իցէ. մեռանել և բառնալ զնախափնս մեր. ցորչափ յոյս մի սնտոի ծիծաղէր 'ի գէմն հայրենեաց, տարայ կապանացս. արդ զի 'ի գերեւ ել, զի ևս դանդաղեմ. օր վերջին Հռովմայ' լիցի և Կաստիոսի. չեմ ես արժանի զօգս զայս շնչել ուր նա գերեալ կայ. կացցէ որ սիրէ, զի սիրողաբար նմին կոծ գիցէ. եթէ ոչ հասցէ ինձ խնդրել այսօր զվրէժ նորա, մեռայց ընդ նմա. զի ևս յապաղեմ: Պոմպէոս, Մեաեդոս և Կատոնի ձեր եմ նախանձաւոր. ժամ է արդ գալոյ զհետ ձեր:

ԲԻՐ. Ոչ, մի այդպէս. մի ումեք լիցուք նախանձաւոր, այլ մեք ինքնին յասպարէզ նոր շահատակեացուք յօրինակ այլոց. տիեզերք ամենայն առ մեզ ուշ եղեալ հային. մի խաբեսցի ակնկալուծիւն աշխարհի և մերոց հայրենեաց: Եթէ ինձ մատուցեալ էր ունին Կատոնի, նա արդ անկեալ թափեալ էր զօգիսն, այլ 'ի վերայ գիականցեալ մարմնոյն Կեսարու յիւրուսն բազկէ, առ ինչ էր նմա զձեռն իւր անպարտ յանձն իւր վսեղ, գնալ զիւրովն. ոչ 'ի շահ ինչ օգտի իւրոց հայրենեաց. ահ, զի զփառս իւր խնդրեաց նա և ոչ զՀռովմայ. զայս միայն մեղաւ գիւցազն այն:

ԿԱՍ. Եւ զինչ այն զոր խնդրէ Բրուտոս յան յուսուծեան պահուս:

ԲԻՐ. Շատ է արդ զի և այսմ իսկ գտաք արժանի:

ԿԻՄԲ. Ահ, մերձենայ ժամն դառնուծեան. յետ ժամու միոյ քակտեցէ Կեսար զՀռովմ:

ԲԻՐ. Յետ միոյ ժամու հարցի 'ի սիրտ, տապաստ անկցի գիական Կեսարու:

ԿԱՍ. Ո՛վ մեծդ, ո՛վ իմ քաջագուն, մատիւր առ իս, ծանեայ արդ զքեզ 'ի վեհագուն յայդ արուծեանէ:

ԻԵՅ. Ո՛վ քաջդ, որ երկմաստակիչ բռնաւորաց, և արժանի ժառանգ գիւցազուն արեան մեծին Բրուտոսի. դոյն բանք էին և իմ և դոյն խորհուրդդ 'ի սրտի:

ԿԱՍ. Զարթուցեր և զիս 'ի մահահրաւէր թմբուծեանէս. քո է փառքն և պսակ գործոյս. այս ակնկալուծիւն էր իմ 'ի քումմէ առաքինուծեանէ: Հռովմ և ոչ այլ ոք շնչեաց 'ի քեզ խորհուրդ այդպիսի. անուն քո միայն մահու գատակնիք ածցէ 'ի գլուխ չար բռնաւորին. եկ արդ, ո՛վ մեծդ Բրուտէ, բարձրուք զնախատինս յերեսաց երկրէ. առցուք զվրէժ փառաց Կապիտոլեայ, զի Արամաղդ յապաղեաց 'ի շանթել: Հապա և դուք, Իեկիմոս և Կիմբոս, զինչ խորհուրդք իցեն և ձեր, յայտնեցէք:

ԿԻՄ. Ամենեցուն մեր մի է խորհուրդ և նոյն կամք. ասեցաք զեկանս, գարշեցաք 'ի բռնաւորէն. սիրեմք զՀռովմ, և խնդրեցուք զվրէժ նորա:

ԻԵՅ. Հարք Հռովմայ, գերադարձք նորա, սատակիչք ամբարշտաց. շատ է մեզ այսքան ժամանակ համբերելոյ ընդ անարժան ձեռամբ բռնաւորին որ ճմլէ զմեզ. և որչափ յերկարեմք մեք զվախճան նորա, մէն մի վայրկեան կենաց նորա մեզ 'ի մեղս գրեցին:

ԿԻՄ. Եւ արդ տեսցուք եթէ արժան իցէ մեզ արդեօք հաղորդ ընդունել զոք փառաց մերում:

ԲԻՐ. Ոն անդր. քաւ այդ առ 'ի մէնջ. շատ է մեր

նախանձ և սիրտ յազատուծիւն հայրենեաց. Լեպիտոս, Եմիլիոս, Տոլպալլա և Փապինիոս մնացորդ ծերակուտին անարիւք և կաշառադնացք ընդ ձեռամբ են նորա. Տուզիլիոսի լեզուին միայն պէտք են Հռովմայ. հոռտոր ծնաւ նա Հռովմայ, ոչ վրէժխնդիր. կացցեն նմա բեմք հոգակ հարկանել զմերս հանդէս, մի ոք բաժանորդ լիցի մեծի այս պատուոյս մի և վտանգին: Կեսար ընդհուպ յատեան երթիցէ. անդ ապա, ո՛վ քաջքդ, շուրջ պատեալ զնովաւ հատուցուք նմա. անդ զայս սուսեր մսեալ 'ի սիրտ նորա ոչ ևս կրկնեցից. հանել թափել ընդ արեան նորա զքէն վրէժու մահուն Պոմպէի, Կատոնի և Հռովմայ: Վասնզ մեծ. ապաքէն պաշտօնեայք նորա կալցին յայնժամ առ հասարակ զամենայն դրուսն տաճարին. ժողովուրդ անմիտ և յողջողդ ոչ գիտէ՝ սիրոյ եթէ ատեւուծե իցէ արժանի այրս այս մահու. ես զմեր մահն առաջի մեր տեսանեմ. սակայն ո՛ր կեանք փոխանակեցեն զայս մահ. մահ իմ փոխան կենաց Հռովմայ. թող խառնեցին մեր արիւնք ընդ արեան բռնաւորին. ո՛վ, զիարդ ցանկալի է այս մահ. մեռցուք, ո՛վ քաջք, մեռցուք զի մեռցի Կեսար. զի և մեր հայրենիք և ազատուծիւն կենդանացին կրկին 'ի մեռելուծեանէ 'ի յաւերժ կենդանուծիւն և 'ի թագաւորուծիւն անմահ:

ԿԱՍ. Արդ զի ևս հեղգանամք, եկայք, միաբան ընթացուք 'ի Կապիտոլիոն. նա անդ համարի նուաճել զմեզ. անդ դատարկացին երակունք նորա. յամբոխէն մի ինչ երկիցուք. տարակոյս պատեալ է զնա, և իբրեւ անկցի ախոյեանն՝ ասեսցեն զնա:

ԲԻՐ. Ապա տացուք միմեանց երգումն 'ի վերայ սրոյս. երգուիցուք 'ի նենգազրաւ անձն Պոմպէի, յանպարտ արիւն Կատոնի. յանձինս բազմաց գիւցազանց Հռովմայ, որ դեռ ևս տարադնաց պանդխտին 'ի սահմանս Լիբիոյ և 'ի հոգիս տարապարտ մեռելոց անմահից՝ որ արդ անբարեխօս դանդաղէն յեզր Ախերոնդայ. երգուիցուք և յաստուածս անմահ՝ որ բողոք կալեալ խնդրեն առ 'ի մէնջ զվրէժ արեան Հռովմայ. զի 'ի խուժադուժ բարբարոսէն թափեցուք զամենայն մթերեալ արիւն, զոր արք և ըմպէ գազանաբար 'ի սրտէն Հռովմայ, մինչև ժայթքեցէ յատակս նորա, զի վարդագեղ ծաղկեցին այլադունեալ երեք Հռովմայ յարենէ նորա:

ԿԱՍ. Ոչ այսչափ միայն, այլ և ուխտ գիցուք սատակել զամենայն այր՝ որ իբրեւ զսա յաւակնեալ զարքայուծե թեկն ածիցէ, քակել զսահմանս հայրենի. եթէ եղբարք իցեն եթէ որդիք եթէ և ծնողք ևս, զի ամենայն բռնաւոր թշուա մի մեր է, քաջք Բրուտէ. Հռովմայեցւոյ ոչ գոյ այլ որդի, ոչ հայր, ոչ եղբայր, և ոչ այլ ինչ, բայց աստուածք միայն, առաքինուծիւն, օրէնք և Հռովմ:

ԲԻՐ. Այսուհետեւ խառնեցին արիւն իմ ընդ արեան ձերոյ. և լիցուք յայսմ հետէ եղբարք միմեանց. չեմք օտար, չեմք անհարազատ, համամայր և համահայր եմք ծնունդք՝ որդիք Հռովմայ և հօրն ամենեցուն վեհին Արամաղդայ: Ոչ այլ մնաց մեզ, բայց կնքել զերգումն մեր արեամբ բռնաւորին: Երգուեալ 'ի ձեզ, գիւցազունք Հռովմայ, որոց միայն տեսիլ պատկերին զօգիս մեր վառէ, երգուեալ և առ ոտս քո, ո՛վ քաջք

Պոմպէ (Ժանը Դնէ) առնել զամենայն 'ի փառս
Հռովմայ, և մի ինչ 'ի մեր. համաշունչ նահատա-
կել 'ի սէր Հռովմայ 'ի կեանս և 'ի մահու: Եր-
թիցուք ապա, երթիցուք 'ի հանդէս մեծի գոր-
ծոյս, զի անագանեաց:
ՍՅԼԲ. Հապա երթիցուք. (այս յառաջէն Բրաբուս
յէպոս Ժոյ):

Կը շարունակուի:

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես երես 63)

362 Ինչո՞ւ համար երկու փայտի կտոր
աւելի լաւ կ'այրին՝ քան թէ մէկ հատն: —
Որովհետեւ օգն կը մտնէ երկու կտորնե-
րուն մէջ տեղ, և հոն կը պատճառէ պզտի
յորձանք մը:

363 Ինչո՞ւ համար փայտն կամ թուղթն՝
եթէ թաթխուին աղի, կրի, փոսփորի կամ
անուշադրի լուծմանց մէջ չեն այրիր, թէ-
պէտ և կրակի դրուած ալ ըլլան: — Նախ,
որովհետեւ աղային քոսը՝ որ կը պատէ այս
դոյութեանց մակերևոյթը՝ և այն աղերուն
ջուրն կ'արգելուն թթուածինը ուղղակի ա-
ծուղին վրայ հասնելու: — Բ. Ասով տաք-
նալն ալ շատ ազդու չըլլալով, միայն ջրա-
ծին կ'արձրկուի և կ'այրէ ամենապզտի
բոցով մը, նոր ջուր ձեացընելով, որ նոյն-
պէս կ'արգելու կիզումը:

364 Ի՞նչ բան է ալքալին: — Գոյացու-
թիւն մ'է՝ որ զուգադրելով թթուներու
հետ՝ զանոնք կը չէզոքացընէ, ինքն ալ չէ-
զոքացած կը մնայ, աղեր պատճառելով, որ
գրեթէ բոլոր լուծանելի են:

365 Ինչո՞ւ համար երբեմն կը հանդիպի՝
որ տեսակ մը փռանց մէջ կը տեսնուին բո-
ցի ցորմունք՝ որ կ'անցնին գիրենք պատող
երկաթեայ ցանցաձև հիւսուածքէն (կամ
կասկարայէն): — Այս բանս կը պատահի՝
եթէ այս տաքցած կասկարային գոտիները
(կամ ձողերը) հաղորդուին գետնածուղի
կտորներու հետ. որով այն ատեն այս կի-
զանուէն բերուած տաքութիւնն կ'արձը-
կէ բորբոքելի կազեր, որոնցմով ինքն լի է,
և այս կազերն ալ չօջափուելով փուռին
զաղաղէն՝ կը բորբոքին և կը պատճառեն
այն ցորմունքը:

366 Ինչո՞ւ համար շատ հեղ տժգոյն կա-
պոյտ բոց մը կը տեսնուի շրջապատոյտ՝ ա-
ծուղէ կրակի մը վրայ: — Որովհետեւ ստո-
րին կարգերուն կրակ կտրած ածղուկը կը
զուգադրի այն ածղային թթուաին հետ՝ որ

կը ծագի ածուղին վերի կարգերուն այրե-
լու ատեն, որոնք ունին անմիջական չօջա-
փում մը օդուն թթուածնին հետ, և կը
պատճառէ նոր բորբոքելի կազ մը (ածղու-
կի քրոալ), որ կ'այրի կապոյտ բոցով:

367 Ի՞նչ պատճառաւ երբեմն կրակին
լոյսն աւելի խիտ կամ սաստիկ կ'երևի: —
Կրակի կամ կանթեղի մէջ լուսոյ խտու-
թիւնը հետեանք է այն ճերմկութեան՝
զոր կ'ունենայ ածղուկն 'ի ձեռն կիզման.
Երբոր ածղուկն բոլորովին ճերմակի դառ-
նայ՝ կիզումն ալ կատարեալ կ'ըլլայ և լոյսն
շատ խիտ. իսկ եթէ կատարեալ չըլլայ՝ լոյսն
ալ ծրխով կ'աղօտանայ:

368 Ինչո՞ւ համար քօրն գետնածուղի պէս
բոց չարձրկեր: — Վասն զի այն կազն՝ որ քօ-
քին մէջ բոց կը ծագէ՝ արդէն սպառուած
է, և քօքն ալ անկիզանելի կազ մը առաջ
կը բերէ (ածղային թթու):

369 Ո՞ր կազն է՝ որ բոց կը պատճառէ
գետնածուղին մէջ: — Ջրածին կրկնածեղալ,
որ բազկացած է ածղուկէ և ջրածնէ: Այս
երկու տարերքս կիզման միջոց մէկ մէկէ կը
զատուին, և կը կազմեն ուրիշ նոր բաղա-
դրութիւններ:

370 Ինչո՞ւ համար տաք ատեն կրակի մը
բոցը աւելի երկայն կը դիմանայ քան ցուրտ
ատեն: — Որովհետեւ սառնամանեաց ա-
տեն օդը խիտ կ'ըլլայ և կրակարանին վրայ
թթուածնի մեծ քանակութիւն մը կը բերէ.
Հետեաբար կիզանուտք մեծաւ արագու-
թեամբ կ'այրին, թռչական կազերն ալ ա-
ւելի շուտ կը սպառին:

371 Ինչո՞ւ համար կրակն ձմեռը աւելի
ուժով կ'այրի քան թէ ամառը: — Որովհե-
տեւ ծրծմունքն ծուխին անցքերուն մէջ ա-
ւելի դիւրաւ կ'ըլլան երբ օդն ցուրտ և
խիտ է:

372 Ինչո՞ւ համար այն ծրծմունքն աւելի
ուժով կ'ըլլան՝ երբ օդն ցուրտ և խիտ է: —
Որովհետեւ շատ տարբերութիւն կայ ծա-
նութեան ընդ մէջ գէպի վեր բարձրացող
տաք օդուն և այն օդուն սեանը՝ որ զայն
կը բարձրացընէ. հետեաբար, տաքցած
օդն կը բարձրանայ և արագաբար դուրս
կը մղուի քան զայն՝ որ ծխանին ստորին
բերնին վրայ կը ճնշուի:

373 Ինչո՞ւ համար կրակն նուազ ժրու-
թեամբ կ'այրի ամառը քան թէ ձմեռը: — Եր-
կու պատճառի համար. Նախ, ամառնային
տաքութիւնը կ'անօսրացընէ զօդը, և որով-
հետեւ այսպէս յեղափոխեալ օդն աւելի
քիչ կը կռէ՝ քան թէ ցուրտ օդի հաւասար
սիւնակ մը, կը հետեւի որ որոշեալ ժամա-
նակի մը մէջ՝ կրակարանին վրայ աւելի
փոքրիկ քանակութիւն մը կ'արծարծի: